

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1) Հակաբուժեղալին շիճուկ, 2) Լրագրութիւնը հնումը, 3) մաղերի ճերմակելու պատճառները:

ՀԱԿԱՔՈՒԹԵՆՍՈՒՆ ԵՒ ՇԻՃՈՒԿԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ մի փառաւոր լաղթանակ ևս. քութեղը,— որ անխնայ կերպով հնձում էր մեր երեխաներին— վերջապէս լաղթահարուեցաւ Ալն, ինչ որ դիֆտերիտի համար արին Ռուն և Բերինգը— նոնը քութէլի համար արաւ գերմանացի նշանաւոր բժշկապետ Լէլդենը: Լէլդենի շիճուկը ստացուում է քութէլ ունեցած և լաւացած անձաւորութիւններին: Մի քանի օրից լետուլ, երբ տենդը անցնում է, հիւանդից արին են թողնում— իհարկէ բոլորովին անվտանգ նորահամար, և ալ արինից պատրաստում են հակաքութէլալին շիճուկ— Լէլդենի օգնական բժշկապետ Բիւմէնտալի սխտեմով: Այդ շիճուկից 20 խորանարդ միլիմետր քանակութեամբ սրսկում են քութէլ ունեցող հիւանդին: Լէլդէնը ղեկավարուում էր այն սկզբունքով, որ երբ մէկը մի անգամ ենթարկուել է այդ հիւանդութեան, նա ալ ևս երկրորդ անգամ չի հիւանդանալ դորանով. ուրեմն նորա արեան մէջ գոլութիւն են առնում այնպիսի նախազգուշացնող միջոցներ, որոնք նորան բոլորովին ապահովացնում են ալդ հիւանդութիւնից: Նոր շիճուկը փորձուեցաւ 15 դէպքերում և ամեն անգամ հետեանքը բարեկալող ելք ունեցաւ, իսկ հինգ դէպքում— Պարելի է ասել փալոււն: Այս հինգ դէպքերում հիւանդներին հենց հիւանդանալու առաջին օրից սրսկում էին շիճուկը և մի քանի օրից լետուլ նուքա բոլորովին ազատուում էին տենդից: Այս 15-ի մէջ կալին բաւական ծանր հիւանդներ: Շիճուկը անպատան անվտանգ է և վերջուում է առողջ պատանիներից: Սրսկելուց լետուլ ոչ ոքի առողջութիւնը չէ խանդարուել: Մինչև իսկ 40 խոր. միլիմետրը շիճուկ սրսկելուց հիւանդը անվնաս է մնացել: Մինչև

ալժմ փորձերը մեծերի վրայ էին անոււմ, որովհետև Լէլղենի կլինիկում երեխաներ չկային. բայց շատ շուտով Լէլղենի իւր փորձերը կկրկնէ և երեխաների վերայ, իհարկէ օրսկելով նոցա աւելի պակաս քանակութեամբ շիճուկ: Առ ալժմս միայն այսքան է լայտնի այս աճազին նշանակութիւն ունեցող դիտնական գիւտի մասին—որ մի փալլուն էջ ևս կաւելացնի բըժըշկական դիտութեան մէջ, անմահացնելով Լէլղենի անունը և դասելով նորան մարդկութեան մեծ բարերար-Ջեների, Պաստեօրի, Ռուի և Երսենի անունները շարքում:

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆՈՒՄԸ. «Tägliche Rundschau» թերթի Ըռովմի թղթակցի ասելով հին Ըռովմում գոլութիւն է ունեցել ամենօրեայ թերթ, իւր բովանդակութեամբ շատ նման մեր ժամանակակից թերթերին: Նորերս գտնուել են տախտակներ, որոնցով կարելի է գաղափար կազմել հին Ըռովմի թերթերի մասին: Գոցանից երևում է որ «Acta Diurna Urbis»-ը տարածուած է եղել Ըռովմի բոլոր մասերում և զաւառներում: Ամեն առաւօտ հրատարակում էին այն, արտագրում և ծախում: Այդ «Acta»-ներում հրատարակում էին ինչպէս կառավարչական հաղորդագրութիւններ, նոյնպէս և դանազան տեղեկութիւններ: Էին մատենագիրները շատ հոգս չէին քաշում զեղեցիկ ոճի մասին, նոքա շատանում էին չոր ու ցամաք վաստեր հաղորդելով, որոնց կից միշտ պատահում են դատողութիւններ և ցնորաբանութիւններ (φαστasia). Ըմբշամարտների մասին հաղորդած տեղեկութիւններին կից—կարելի է հանդիպել Ըռովմի մօտերը գտնուած սոսապելական հաւի մասին մի հրաշալի զրոյց: Պլինիոսը նոյնպէս աշխատակցում էր այդ թերթին և ինչպէս երևում է նա շատ դարդացած երևակալութիւն է ունեցել, որովհետև այդ հաւի մասին պատմած զրոյցը նորան է պատկանում: Մի ուրիշ համարում նա հաղորդում է, որ, Կլաւդիոսի սպանման զործի քննութեան ժամանակ, քաղաքի մի քանի մասերում աչրուած աղիւսի անձրև էր տեղում: Ժամանակակից գիտնականները նոյնպէս օգտոււմ էին լինեալ լրագրից: Տակիտոսը ալնտեղից է արտագրել Ըրմանիկի լուղարկաւորութեան նկարագիրը և Կլաւդիոսի ապօֆէօզը: Նոյն տեղից է նա քաղել ձերակոտի ժողովում տեղի ունեցած այն վիճարանութիւնը, երբ ի պատիւ Ներոնի կամենում էին տաճար կառուցանել—և ձերակոտի անդամ Թրազէտոսը զգուանքով բողոքեց իւր ընկերակիցների ցածութեան դէմ, որնք քաջալերում էին Ներոնի մալրասարանութիւնը, Դիօնիսը նոյն աղբիւրից իմացաւ Կոմոդիոսի տարած լաղթութեան մասին ամֆիթէատում: Այդ թերթից քաղած հետեւեալ համառոտ հաղորդագրութիւնից կարելի է իմանալ, թէ ինչպէս հին Ըռովմի լրագիրը—լատալընթաց է եղել նոր լրագրութեան: Այնտեղ ասուած է.

«Այսօր հիւպատոս Սավինիոսը ստանձնում է իւր պաշ-

տօնը.—Նրեկ մեծ մրրիկ կար քաղաքում.—կալծակը դարկեց երեկոյեան Վելիի մօտ դանուած մեծ կաղնուն.—կանուտի սեղանի մօտերը դանուած «Արջ» ճաշարանում մեծ կռիւ պատահեց, ճաշարանի տէրը վտանգաւոր կերպով վիրաւորուած է։—Եղիլ Տիգրանը մատրոնների մասին դատավճիռ լալտնեց, որովհետև նորա բացարձակ կերպով ծախում էին այնպիսի միս, որ առաջուց դնուած չէր։ Դրամական տուգանքները կը դործադրուին սեղան կառուցանելու համար։ Առաաֆ Անտի-դիտը բաւական մեծ դումար վերցնելով իւր հետ փախել անհետացել է։ Իսկոյն նորա լեռնից ընկան, ձերբակալեցին և փողերը մօքը դտան։ Ֆոլտենիոս կուսակալը հրամայեց որ փողերը իրենց տէրերին լանձնուին։—Դենիֆոն աւաղակին, որին նորերս ձերբակալել էին, այս առաւօտ խաչեցին։

ՄԱՋՆՐԻ ԶՆՐՄԱԿԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ,—Նորերումս լուստեսա ուսուցչապետ Ի. Մեչնիկովի հետաքրքրական ուսումնասիրութիւնը մաղերի ճերմակելու մասին։—Յայնի է, որ մաղերի սպիտակելը նշան է ծերութեան մօտենայուն, թէև քիչ չեն և այնպիսի դէպքեր, երբ երիտասարդական հասակում և կամ որևէ հոգեկան վրդովմունքի ազդեցութեան տակ մի քանի բոսյէի ընթացքում սպիտակում են բոլոր մաղերը։

Ի՞նչից է առաջանում մաղերի սպիտակելը։

Մինչև վերջին ժամանակները այդ երևութիւն անբացատրելի էր մնում։—Ճիշտ է, վաղուց լալտնի էր, որ մաղերի գոյնը կախուած է առանձին ներկանիւթի հատիկներից, որոնք պատրաստուած են վերնամաշկում և տարածուած են մաղի ամբողջ հաստութեան մէջ.—Յալտնի է և այն, որ մաղերի սպիտակելու ժամանակ այդ ներկանիւթը անհետանում է և փոխարինում են օդի բշտիկներ, որոնք մաղին սրձաթաղուն փալ են տալիս։ Սակայն, ր հարկէ այս բացատրութիւնը դուհացուցիչ չի կարող համարուել։ Հարկաւոր էր գլխաւորապէս իմանալ թէ ինչո՞ւ են անհետանում ներկող հատիկները։ Այս հարցին է նուիրուած ուսուցչապետ Ի. Մեչնիկովի ուսումնասիրութիւնը,—որ մեծ հետաքրքրութիւն է շարժում մանաւանդ այն լարակցութիւնների շնորհիւ, որ նորան լաշողուեց պարզել այդ հարցի ուսումնասիրութեան ժամանակ։ Նա մի շարք սխտեմատիքական մանրազննին խոշորացուցական դիտողութիւններ կատարելուց լետու այն եղրակացութեան եկաւ, որ ներկայ երևոյթի գլխաւոր պատճառը են ամօք ամսման շարժուն վանդակիկները, որոնք ընդհանուր խօսքով ֆագոցիտ են կոչուում։

Եթէ մենք ուշադրութեամբ նայենք մեր մաղերին—նոցա սպիտականալու շրջանում—բոլորովին սպիտակացած և դեռ բոլորովին իւր գոյնը պահպանած մաղերի հետ կոտեսնեք նաև կիսասպիտակ մաղեր—այսինքն այնպիսի մաղեր, որոնք մասամբ սպիտակել են և մասամբ պահպանել իրենց բնական

գործը: Ահա այդ կիսասպիտակ մազերի մէջ—մանրադիտակը ցոյց է տալիս ամէօբանման վանդակիկներ, ահ ինչ այդ վանդակիկները չկան ո՛ր բոլորովին սպիտակ և ո՛չ էլ իրենց գոյնը պահպանած մազերի մէջ:

Այսպիսով հաստատուում է մի վերին աստիճանի հետաքրքիր փաստ, որ մազի մէջ ամէօբանման վանդակիկները այն ժամանակ են երևում, երբ նա սկսում է կորցնել իւր ներկող նիւթը և նոքա միանգամայն անհետանում են, հէնց որ այդ նիւթը բոլորովին սպառուում է: Այդ երևութիւնը ինքն ըստ ինքեան այն եզրակացութեան է հասցնում, որ ներկող նիւթի անհետանալու—ուրեմն և մազը սպիտակելու գլխաւոր պատճառը, են ամէօբային վանդակիկները:

Այնուհետև կատարած խոշորացուցային դիտողութիւնները կատարելապէս ապացուցեցին այդ եզրակացութիւնը: Արևում է, որ այն վանդակիկները, հէնց որ մազը սպիտակելու ժամանակը հասնում է, ներս են թափանցում նրա խորքը—իրենց կեղծ սոսիկներով բռնում են ներկանիւթի հատիկները և նրանցով բռնաւորուած իջնում են մազի պարկերը, ուր և այդ ժամանակ, կարելի է դիտել նրանց խոշորացուցով և ապա բոլորովին հեռանում են մազից—տեղափոխուելով հարեան հիւսուածքը: Ներկող նիւթի ալգորիթմակ լափշտակման գործողութիւնը շարունակուում է մինչև նրա վերջնական սպառումը:

Ահա թէ ինչն է մազի սպիտակելու մօտաւոր պատճառը: Նոյն այդ ամէօբային վանդակիկները, որ արեան մէջ իբրև սպիտակ գնդակներ կռուի են բռնում միկրոօրգանի հետ, որոնք իբրև արթուն պահպաններ լարձակուում են մեր հիւսուածքի մէջ ներս մտնող ամեն մի կողմնակի մարմնի վրայ, որոնք բորբոքման դէպքում մեր կաղմուածքի օդնական են հանդիսանում, որոնք վերջապէս անգնահատելի ծաւալութիւն են մատուցանում կաղմուածքին—լափելով և ոչնչացնելով մարմնի այն հիւսուածքները, որոնք անդամհատութեամբ պիտի հեռացուին, նոյն այս վանդակիկները ներկալ դէպքում ևս ըստ էութեան նոյն դերն են կատարում. այստեղ ևս հէնց որ վրայ է հասնում այն ժամանակը—երբ կենսական ոյժերի պահպանելու պատճառով կաշուի հիւսուածքը այլ ևս անկարող է լինում պատրաստելու հարկաւոր քանակութեամբ ներկանիւթ, և այդպէսով եղած ներկող մարմնիկները աւելորդ են դառնում—իսկոյն այդ վանդակիկները մօտենում են թուլացած մասի մէջ և ցնտեղից դուրս են հանում արդէն անպէտքացած ներկանիւթը:

Վանդակիկների դերը—այսպէս ասած—գործադրական է, և հարկաւոր են պատշաճ հանգամանքներ, որպէս զի նոքա կարողանան իրենց գործը սկսել: Այդ հանգամանքն է կենսական գործունէութեան թուլանալը, —որը կամ ուղղակի հետե-

ւանք է ձերութեան և կամ թէ որեւէ շղախն ճնցման, որի սրայճառով վնասում է ներկող նիւթը պատրաստող հիւսուածքը և լանկարծ մազերը սպիտակում են:

Մինչև արժամ դէթ շատ դժուար էր բացատրել, թէ ինչու լանկարծ մի քանի ժամուայ ընթացքում մարդու մազերը սպիտակում են, սակայն արժամ, երբ լալտնուեցաւ որ մազի սպիտակելու ժամանակ դեր են խողում արդ վանդակիկները, որոնք լալտնի են իրենց արագ գործունէութեամբ, ներկող նիւթի արագ անհետանալը և հետը միասին մազերի արագ սպիտակելը աս ևս դարմանալի չէ թւում:

Ա. Ա.

Գրական և գրականության մասին հարցազրույցները հարուստ են տեղեկությամբ և հարուստ են գրականության մասին հարցազրույցներով: Գրականության մասին հարցազրույցները հարուստ են տեղեկությամբ և հարուստ են գրականության մասին հարցազրույցներով: Գրականության մասին հարցազրույցները հարուստ են տեղեկությամբ և հարուստ են գրականության մասին հարցազրույցներով:



Գրականության մասին հարցազրույցները հարուստ են տեղեկությամբ և հարուստ են գրականության մասին հարցազրույցներով: Գրականության մասին հարցազրույցները հարուստ են տեղեկությամբ և հարուստ են գրականության մասին հարցազրույցներով: Գրականության մասին հարցազրույցները հարուստ են տեղեկությամբ և հարուստ են գրականության մասին հարցազրույցներով: